

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆ

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1894 թ. աշնանը Հայոց Նրատարակչական ընկերությունը լույս ընծայեց Շեքսպիրի «Համլետ»-ը: Համաշխարհային գրականության այդ գլուխ-գործոցի երևան գալը մի կատարյալ տոն էր հայ արվեստի և գրականության համար. երկար փորձություններից հետո Շեքսպիրը դառնում էր հայ ընթերցողի սեփականությունը: Ժամանակի արվեստաբանները և գրողները հմայված ու դարմացած էին հայացված «Համլետ»-ով:



հաղիվ հիսուն տարեկան աշխարհաբար հայերենը փայլուն քննություն էր բռնել և դասվել վաղուց իրենց հունը մտած եվրոպական լեզուների կողքին: Անվանի բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը «Համլետ»-ի թարգմանության առթիվ գրում է. ««Համլետի» այս թարգմանությունը մեզ վրա գեղեցիկ տպավորություն է թողնում՝ նախ այն պատճառով... որ թարգմանիչը քաջ գիտե յուր մայրենի լեզուն և վստահությամբ օգտվում է յուր գիտությունից, մի առավելություն, որին կարող են նախանձել մեր շատ անուն հանած հեղինակներն ու թարգմանիչները, երկրորդ. այդ լեզուն ճոխ է և բանաստեղծական, որ մի անհրաժեշտ պայման է անշուշտ Շեքսպիրի նման հեղինակների գործերի թարգմանության համար»:

Հրապարակախոս և գրականագետ Սիմեոն Հախումյանն ըստ արժանվույն գնահատելով «Համլետ»-ի թարգմանությունը, գրում է.

«...թարգմանությունն այնքան հմտությամբ է կատարված, որ հաղիվ թե կարելի լինի նրա մեջ չնչին պակասություն գտնել... ոտանավորի մեջ նա (թարգմանիչը—Վ. Վ.) կատարյալ հրամանատար է յուր գրչին՝ և այդ դժվար գրական ձևը ամենևին չի աղավաղում ոչ նրա լեզուն, ոչ ոճը և ոչ ամբողջ գրվածքի հյուսվածքը»:

Թումանյանն իրեն հատուկ ջերմությամբ ողջունեց «Համլետ»-ի մուտքը հայ գրական աշխարհ. նրա գնահատմամբ հայերեն «Համլետ»-ը հայոց լեզվի զարգացման շափանիչ էր, աշխարհաբար լեզվի համահավաք նվաճումը, հայ կուլտուրայի զարգացման աստիճանը:

«Սշակ» թերթը «Համլետ»-ի թարգմանությունը գնահատեց որպես մի լավագույն նվաճում «վիպական մատենագրության» մեջ:

«Համլետ»-ի թարգմանության հեղինակը պարսից շահի արքունական թարգման, հասարակական գործիչ, Թեհրանի Հայկազյան դպրոցի տեսուչ Հովհաննես Մասեհյանն էր:

Հ. Մասեհյանը ծնվել է 1864 թ. փետրվարի 23-ին Թեհրանում: Բացառիկ պայմաններում է անցել նրա մանկությունը և թերևս ամբողջ կյանքը: Հայրը՝ Մերունի աղա Մասեհյանը, պարսից

1 «Արարատ», 1895, № 2, էջ 57:

2 «Արձագանք», 1895, № 21:

3 Տե՛ս «Տարազ», 1896, № 43:

4 Տե՛ս «Մշակ», 1895, № 1:

Նասրեդին շահի արքունի ոսկերչագետն էր, նա հռչակված էր իր պատրաստած ադամանդակուռ գլորուսով: Ականատեսը պատմում է, որ պարսից շահի ձմեռային պալատի դահլիճներից մեկում դրված էր հռչակավոր երկրագունդը, շինված հակինթ, փիրուզ, զմրուխտ, ադամանդ, մարգարիտ և այլ թանկագին քարերից, որի արժողությունը մոտ 5 միլիոն ռուբլի էր: Այդ երկրագունդը, ավելացնում է ականատեսը, կերտել է Նասրեդին շահի ոսկերչագետ Մերունի ադա Մասեճյանը⁵:

Մեռողները առանձին հոգատարություն են հանդես բերում իրենց ընդունակ և աչքաբաց որդու դաստիարակության ու կրթության նկատմամբ:

Փոքրիկ Հովհաննեսը հինգ տարեկանից հաճախում է դպրոց, նրա առաջին կրթարանը եղել է Մկրտիչ վարդապետի ս. Բարդուղեմեոսի եկեղեցուն կից վարժարանը:

1870 թ. Միքայել Մարդարյանի և Կարապետ Պաղիբկյանի նախաձեռնությամբ Թեհրանում կազմակերպվում է «Ուսումնասիրաց ընկերություն»-ը, որը հիմնադրում է Հայկազյան դպրոցը: Հովհաննեսը հենց նույն տարին ընդունվում և 1878 թ. փայլուն առաջադիմությամբ, ոսկե նշանով ավարտում է այդ դպրոցը: 1878 թ. 14 տարեկան Հովհաննեսը մեկնում է Թավրիզ մորեղորո՝ Անտոն խան Երվանդյանի մոտ ուսումը շարունակելու: Անտոն խանը շահի գահաժառանգի դաստիարակն էր, ժամանակի անվանի ուսումնականներից մեկը:

Հ. Մասեճյանը երեք տարի Թավրիզում մորեղորո մոտ սովորելուց հետո, 1881 թ. բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնում է Փարիզ: Փարիզում սովորում է Կոլեջ դ' Ֆրանս դպրոցում⁶: Փարիզում պատանի Հովհաննեսը սովորել է փիլիսոփայություն, իրավագիտություն, քաղաքատնտեսություն և գրականություն:

Երեք տարի հետո, 1884 թ., քսան տարեկան Հ. Մասեճյանը վերադառնում է Թեհրան: Նա սկզբում աշխատանքի է անցնում Թեհրանի Հայկազյան դպրոցում որպես ուսուցիչ և նույն տարին էլ մարզմանի պաշտոնով հրավիրվում է պարսից շահի արքունիքը, որով և սկսվում է նրա երկարամյա դժվարին ու բարդ դիվանագիտական և թարգմանական գործունեությունը: Գիտելիքների մեծ պաշարը, լեզվական զարմանալի կարողությունը, կիրթ վարք ու բարքը Մասեճյանին պահում են բոլորի ուշադրության կենտրոնում:

1887 թ. պարսից շահի արտակարգ դեսպանությունը մեկնում է Լոնդոն՝ Վիկտորիա թագուհու դահակալության 50-ամյա հորեկյանական տոնահանդեսներին ներկա լինելու: Դեսպանությունը գլխավորում էր իշխան Խեհսման-օլ-Սալթանեն. գլխավոր թարգմանիչը Հ. Մասեճյանն էր¹⁰: Լոնդոնը մեծ տպավորություն է գործում երիտասարդ դիվանագետի վրա:

Պարսից շահը 1894 թ. Ամիր խան Սարդարի գլխավորությամբ մի դեսպանություն է ուղարկում Պետերբուրգ՝ Նիկոլայ 11-ի գահակալությունը շնորհավորելու: Ինչպես Հ. Մասեճյանն է նամակում գրում, ինքն ընկերակցել է Ամիր խան Սարդարին որպես առաջին թարգման¹¹: Վերադարձի ճանապարհին դեսպանությունը մի քանի օրով կանգ է առնում Մոսկվայում. առիթից օգտվելով Մասեճյանն այցելում է հայ մշակութային գործիչներին: Դեկտեմբերի 17-ին նա ներկա է լինում Մոսկվայի Ազնվականների տանը կազմակերպված հայկական երեկույթին: Այստեղ է լինում նաև Վ. Սուրենյանցը¹², մի հանգամանք, որ շատ հետաքրքրական է երկու հեղինակների կապերի մեկնաբանման տեսակետից: Մոսկվայում Մասեճյանը լինում է Գ. Քանանյանի տանը, ծանոթանում և կարծիքներ փոխանակում մի խումբ հայ մտավորականների հետ¹³:

Դիվանագիտական այցելությունները մի նոր համարում են բերում Հ. Մասեճյանին. ի հայտ է գալիս նրա ձիրքը այդ ասպարեզում: 1895 թ. աշնանը նա նշանակվում է պարսից կառավարության արտաքին գործոց մինիստրի գրասենյակի պետ:

5 Տե՛ս «Մշակ», 1900, № 68:

6 Տե՛ս Գ. Դարձի, Հովհաննես Մասեճյան, Թեհրան, 1963:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում:

11 Տե՛ս ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Համարձում Առաքելյանի ֆոնդ (այսուհետև ԳԱԹ ՀԱՖ), № 805:

12 Տե՛ս «Մշակ», 1894, № 149:

13 Տե՛ս ԳԱԹ, Գրիգոր Խալաթյանի ֆոնդ (այսուհետև ԳԽՖ), ք. 5, 97դ:

Հ. Մասեհյանն իր երկրորդ ճանապարհորդությունը դեպի Լոնդոն կատարել է 1897 թ. մայիսին՝ Վիկտորիա թագուհու զահակալության 60-ամյակը շահի կողմից շնորհավորելու առիթով:

Այս մասին «Մշակ»-ը հաղորդում է. «Պարսից շահի կողմից մի արտակարգ դեսպանություն է գնում Լոնդոն, Վիկտորիա թագուհու թագադրության 60-ամյա հոբելյանին մասնակցելու համար: Այս արտակարգ դեսպանության առաջին քարտուղար է նշանակված Հովհաննես խան Մասեհյանը»¹⁴:

Մինչև 1901 թ. մայիսը Հ. Մասեհյանը մի րանի պաշտոններ է վարել Պարսկաստանի արտաքին գործոց մինիստրությունում. եղել է օպերատիվ քննիչ, արտասահմանյան թղթակցությունների բաժնի վարիչ: Բադի իր պատմոհի. Մասեհյանը 1899 թ. Թեհրանում հիմնված քաղաքական գիտությունների բարձր դպրոցում վարում է միջազգային իրավունքի ամբիոնը¹⁵: 1901 թ. մայիսին Մասեհյանը Բեռլինի պարսից դեսպանի օգնական-խորհրդականի պաշտոնով Թիֆլիսի վրայով մեկնում է Նվրոպա¹⁶: Այս թվականից Հ. Մասեհյանի դիվանագիտական գործունեության երկրորդ, հիմնականում է այսպես ասել, եվրոպական շրջանն է սկսվում: Մասեհյանը վերոհիշյալ պաշտոնում մնում է մինչև 1906 թ., նույն թվականին նշանակվում է «Դաբե դ'աֆեր»՝ գործերի ժամանակավոր հավատարմատար և այդ պաշտոնում մնում է մինչև 1911 թ.: Բեռլինի պարսից դիվանագետը միևնույն ժամանակ Թեհրանից Լոնդոն և այլ քաղաքներ առաքվող դիվանագիտական միսիաների անդամ է եղել: Այսպես, 1901 թ. ամռանը պարսկական մի պատվիրակություն մեկնում է Փարիզ, այնուհետև՝ Լոնդոն. որի կազմում էր նաև Մասեհյանը: Ինչպես վկայում է Հ. Հավրյանը, նա ղեկավարել է դիվանագիտական և հյուպատոսական այլ հաստատություններ նաև Մյունխենում, Շտուտգարդում, Դրեզդենում և Գերմանիայի ուրիշ քաղաքներում¹⁷:

Հ. Մասեհյանը 1911 թ. ստանձնում է պարսից արքունիքի քարտուղարության պետի, Զավրյանի ասելով՝ պետական գույքերի վարիչի պաշտոնը¹⁸:

Քաղաքացիական կոիվները Պարսկաստանը հասցրել էին անկման եզրին ինչպես քաղաքականապես, այնպես էլ տնտեսապես: Երկիրը բաժանվել էր երկու խոշոր պետությունների՝ Ռուսաստանի և Անգլիայի ազդեցության շրջանների: Մերձավոր ու Միջին արևելքը, այդ թվում և Պարսկաստանը, դարձել էին հակառակորդ կոալիցիաների մրցադաշտ: Պայքարը գնում էր այն րանի համար, թե պետությունների ո՞ր խումբը պետք է հաղթանակ շահեր: Այսպիսի պայմաններում պարսկական պալատում քննվում է այն արցը, թե ով պետք է Պարսկաստանը ներկայացնի Բեռլինի նման մի քաղաքական կենտրոնում, ով է այն քաղաքագետը, որ պետք է զուգահեռ խոշոր պետությունների հակամարտություններից և պաշտպանի երկրի շահերը: Վիճակն ընկավ Հ. Մասեհյանին: Բայց քրիստոնյան իրավունք չունեի որպես դեսպան ներկայացնելու մահմեդական Պարսկաստանը: Ինչ անել: Հարցը վեճերի առիթ տվեց, որոնք վերջացան նրանով, որ, բացառություն անելով, պարսից նոր շահը 1912 թ. ստորագրեց Հ. Մասեհյանին Բեռլինում դեսպան նշանակելու ֆերմանը¹⁹:

Հ. Մասեհյանը Բեռլինը թողել է 1916 թ. մարտին: 1916—1919 թթ., թերևս շահի հատուկ հանձնարարականով, նա գտնվում էր Փարիզում²⁰: 1919 թ. Վերսալյան դաշինքի կնքման ժամանակ նա դիվանագիտական շրջաններում պետք է ներկայացնեի Պարսկաստանը:

1927 թ. Հ. Մասեհյանը նշանակվում է պարսից դեսպան Լոնդոնում և մինչև 1929 թ. մնում է այդ պաշտոնում: 1929 թ. Պարսկաստանը դիվանագիտական հարաբերությունների մեջ է մտնում Ճապոնիայի հետ: Երկու կողմերը պայմանավորվում են ներկայացուցիչներ փոխանակել դեսպանական մակարդակով: Տոկիոյում պարսից առաջին դեսպան է նշանակվում Հ. Մասեհյանը²¹:

Հովհաննես Մասեհյանի մասին գրված սակավաթիվ հոդվածներում, ինչպես և Թեհրանում հրատարակված փոքրիկ գրքույկում, կամ չի խոսվել, կամ էլ թեթևակի ակնարկվել է նրա մակարժական գործունեության մասին: Այնինչ այդ բնագավառում նրա կատարած մեծ աշխատանքը Հայկազյան դպրոցի պատմության ամենահետաքրքրական էջերից մեկն է:

14 «Մշակ», 1897, № 56:

15 Տե՛ս «Մշակ», 1901, № 112:

16 Տե՛ս նույն տեղում:

17 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1933, հունվար, էջ 85:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 86:

19 Տե՛ս Թեոդիկ, Ամենույն տարեցույց, 1913, էջ 297:

20 Տե՛ս Պոկլ, ֆ. 57, ց. 2, գ. 661, թթ. 109—110:

21 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1933, հունվար, էջ 86:

Հայտնի չէ, թե Մասեհյանը որ թվականից է ուսուցչի պաշտոն ստանձնել Քեհրանի Հայկազյան դպրոցում: Հավանական է, որ 1884 թ., Փարիզից վերադառնալուց հետո, պարսից արքունիքում իր պաշտոնին զուգընթաց նա աշխատանքի է անցնում նաև դպրոցում: Այն ժամանակներում Քեհրանի հայկական զաղութը չէր կարող Հ. Մասեհյանի նման կրթված և լուսավոր հայացքներ ունեցող վառվռուն երիտասարդի կարիքը չունենալ: Ինչպես հետագա տարիներին գրած նամակներից է երևում, նա Հայկազյան դպրոցում ավանդել է ֆրանսերեն, պարսկերեն, պատմություն, աշխարհագրություն, գուցե և հայոց լեզու: 1888 թ. Քեհրանից Հ. Առաքելյանին ուղղված նամակի բովանդակությունից երևում է, որ նա սոսկ ուսուցիչ չի եղել, այլև, ըստ երևույթի, դպրոցի ղեկավար, քանի որ միայն տեսուչը կամ կառավարիչը կարող էր այդքան մտահոգություն հանդես բերել դպրոցի նկատմամբ: Շարքային ուսուցիչը չէր կարող լիազորություն ունենալ դրամական ծախսերի շուրջը, ինչպես և իրավասություն՝ ուսուցիչների հետ պայմանագիր կնքելու և նրանց պարտականությունները սահմանելու հարցում: Այս խնդիրների շուրջը նա դիմել է նաև Անտոն խան Երվանդյանին և Գր. Արծրունուն²²:

Հ. Մասեհյանը, ինչպես արդեն նշվեց, 1884 թ. հրավիրվեց պարսից արքունիք և ստանձնեց շահի թարգմանի պարտականությունը: Այդ տարիներին նա կատարել է բազմաթիվ թարգմանություններ՝ եվրոպական գրողներից: Ինչպես Զավրյանն է վկայում, դրանց թիվը հասնում է 50-ի²³, Դժվար է այստեղ հիշատակել բոլոր այդ թարգմանությունները, քանի որ դրանք անհայտ են: Կարելի է վկայակոչել արխիվային մի վավերաթուղթ, ցույց տալու, որ Մասեհյանը ոչ միայն գեղարվեստական երկեր է թարգմանել, այլև գիտությունը և արվեստին վերաբերող ուրիշ գրքեր: 1889 թ. Հ. Առաքելյանն իր հուշատետրում գրել է. «Կարդացի կոմս Վեչերսկու գրած և շահին ընծայած ֆրանսերեն գիրքը, ձեռագիր՝ «La Perse dans la question d'Orient» (Պարսկաստանը Արևելքի հարցում)՝ վերնագրով, որ կոմսը գրել է 1862 թ.: Այս ձեռագիրը գտնվում է շահի գրատան մեջ, ես ստացա Հովհաննես խան Մասեհյանից, որին հանձնված է պարսկերեն թարգմանել»²⁴: «Մշակ»-ում տպագրված մի ընդարձակ հոդվածում ասված է, որ պարսից շահը մեծ սեր ունի դեպի գործնական գիտելիքները և աշխարհագրությունը: Հիշյալ բնագավառներին վերաբերող գրականությունը շահի համար թարգմանել են Անտոն խան Երվանդյանը և Հովհաննես խան Մասեհյանը²⁵: Այս փաստերը վկայում են, որ մինչև շեքսպիրյան թարգմանություններ սկսելը Հ. Մասեհյանը երկար և լուրջ նախապատրաստական շրջան է անցել: Եթե հաստատ է, որ նա շահի ընթերցանության համար կատարել է թարգմանություններ, ինչպես վկայում է նաև Մասեհյանի մոտ բարեկամ Ավ. Իսահակյանը²⁶, ապա կարելի է ենթադրել, որ այդ թարգմանությունների թվում եղել են նաև Շեքսպիրի երկերից²⁷: «Համլետ»-ի թարգմանությունից հետո Մասեհյանը, տեսնելով իր գործի հաջողությունը, ձեռնամուխ է լինում Շեքսպիրի մյուս երկերի հայերեն թարգմանությանը և հաջորդաբար ասպարեզ է հանում «Ինչպես կուզեք», «Արքա Լիր», «Ռոմեո և Ջուլիետ», «Վենետիկի վաճառականը» երկերը:

Հ. Առաքելյանին ուղղված նամակներում²⁸ արտացոլվել է Հ. Մասեհյանի թարգմանական անխոնջ գործունեության պատմությունը: Մասեհյանն անդադրում հետամուտ է եղել թարգմանությունների ճակատագրին, ինչ միջոցի, ում ասես, որ չի դիմել Շեքսպիրին ամբողջովին հայացնելու մտադրությունը գլուխ բերելու համար: Նախ Հ. Առաքելյանի միջնորդությամբ նա բանակցություններ է սկսում Հայոց հրատարակչական ընկերության հետ²⁹, սակայն տեսնելով, որ բան չի ստացվում, Մոսկվայում եղած ժամանակ (1894 թ. դեկտեմբեր) պայմանավորվում է «Գրագետների խմբի» ղեկավար, հայագետ և եռանդուն հասարակական գործիչ Գրիգոր Խալաթյանի հետ՝ տպագրելու իր թարգմանությունները: Խալաթյանը խոստանում է իր հրատարակելիք պարբերականում տարեկան 3—4 պիես տպագրել և մի տասը տարում գլուխ բերել թարգմանչի ցանկությունը: Սակայն Խալաթյանի և իր ընկերների մտադրությունը չի իրականանում, ամեն բան արվում է, բայց կառավարությունը արտոնություն չի տալիս և պարբերականը չի հրա-

22 Տե՛ս ԳԱԹ ՀԱՅ, № 794:

23 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, հունվար, 1933:

24 ԳԱԹ ՀԱՅ, № 201:

25 «Մշակ», 1900, № 94:

26 Տե՛ս «Երեկոյան Երևան», 1964, № 87:

27 Տե՛ս Գ. Դ ար ֆ ի, նշվ. աշխ.:

28 Տե՛ս ԳԱԹ ՀԱՅ, № 797—810:

29 Տե՛ս ՊՊԿԱ, ֆ. 30, ց. 1, գ. 13, թթ. 61, 61ա:

տարակվում: Ի դեպ, Գր. Խալաթյանը առաջարկել էր Մասեհյանին ստանձնելու պարբերականի՝ Թեհրանի բաժանմունքի տնօրինությունը³⁰:

Հ. Մասեհյանը թղթակցություն է սկսում Հայոց հրատարակչական ընկերության վարչության նախագահի հետ և առաջարկում տարեկան շորս պիես տպագրել: Ահա թե ինչ է գրում նա 1896 թ. հունվարի 16-ի նամակում. «Ես զոհ եմ այն վարձատրությամբ, որ ընկերությունդ ձևած է ինձ տալ իմ Շեքսպիրի թարգմանությանը համար. դրամական կողմը այդ խնդրի մեջ զլխավոր մտադրությունը չլինելով, քիչ ավելի կամ քիչ պակաս մեծ նշանակություն չունի. արդեն այդ թարգմանություններով զբաղվելը ինձ համար ինքնուրույն քան դրամական վնաս է: Իմ նպատակս եղած է մի քանի տարիների ընթացքում, օգուտ քաղելով այժմ իմ ունեցած ազատ ժամանակից (ինչ որ վաղը կարող եմ չունենալ), փոխադրել հայերենում ամբողջ Շեքսպիրը, իսկ այդ հապաղումներով, որով վարչությունդ կամենում է տպագրել իմ թարգմանությունները, քառասուն տարի է հարկավոր, մինչև բոլորը տպագրվի: Ուրեմն՝ պայման ընդունելուց առաջ՝ ես հարկ եմ համարում Ձեզ տեղեկություն տալ, որ եթե միջոցներ ձեռք չառնեք ավելի արագ տպագրության համար, այն է՝ գոնե 4 պիես առ տարին, ես պարտավորված կլինեմ ուրիշ միջոցների մասին մտածել, իսկ եթե այս խնդրի մեջ էլ դրամական կողմը մի արգելք է, ես պատրաստ եմ սպասել մինչև տարվա վերջը և տարեկան ժամանակ միայն ստանալ տպագրված գրքերի իմ վարձատրությունս»³¹:

Հրատարակչական ընկերությունը միջոցների պակասության, թե գործի անբարեկարգ վիճակի պատճառով չի բավարարել թարգմանչի ցանկությունը: Ընկերության նախագահը պատասխանում է, որ իրենք չեն կարող նախապես այդ պայմաններն ընդունել³²: Մասեհյանը խոր տաղանապ է ապրում իր թարգմանությունների ճակատագրի նկատմամբ, զգալով, որ ինքը շուտով կհեռանա Թեհրանից և այլևս ժամանակ չի ունենա իր սիրած գործով զբաղվելու: Նա բացատրություն է պահանջում, թե ինչու է հրատարակչական ընկերությունը ձգձգում տպագրության գործը³³: Մասեհյանին այդպես էլ չի հաջողվում իր մտադրությունն իրագործել: 1901 թ. պաշտոնի բերումով նա անցնում է Եվրոպա: Բեռլինում գտնված առաջին տասնամյակում, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, նա նոր թարգմանություն չի կատարել: Ստացվում է, որ մինչև 1909 թ. Մասեհյանը Շեքսպիրից թարգմանել է ընդամենը ինը պիես:

90-ական թթ. նա արդեն թարգմանել էր «Օթելլո»-ն, «Մակբեթ»-ը, ինչպես և «Փոթորիկ»-ը: Բայց ահա 1903 և 1904 թթ. այս երեք պիեսը նա նորից է թարգմանում: Մասեհյանն իր առաջին թարգմանությունները կատարել է Վ. Հյուգոյի նշանավոր սկզբունքով, սակայն հետագայում, ինչպես ինքն է ասում «Համլետ»-ի երկրորդ հրատարակության առաջաբանում, հրաժարվել է այդ սկզբունքից և նոր մեթոդով է սկսել թարգմանել³⁴: Ուրեմն ականավոր թարգմանիչը 1901 թ. սկսած ստեղծագործական նոր վերելք է ապրել: Ուստի կարելի է որոշակի ասել, որ Մասեհյանը ստեղծագործական երկու շրջան է ունեցել. առաջինը՝ 1892—1900, երկրորդը՝ 1901—1931 թթ.: Եվրոպայում եղած առաջին տասնամյակում նա նոր թարգմանություններ չի կատարել, զբաղվել է վերաթարգմանություններով և այդ կատարել է միանգամայն նոր սկզբունքներով:

Այս վերաթարգմանությունները Մասեհյանը ցանկացել է հրատարակել Բեռլինում, Պետերբուրգում կամ Քիֆիսում, սակայն նորից անհաջողություն է կրել: Միայն 1921—1923 թթ. Վիեննայի Միթթարյանները թարգմանչի առաջաբանով ու մեկնաբանություններով շքեղ հրատարակությամբ լույս են ընծայում «Համլետ»-ը, «Օթելլո»-ն, «Մակբեթ»-ը և «Վենետիկի վաճառականը»:

«Համլետ»-ի առաջաբանից իմանում ենք, որ Հ. Մասեհյանը մինչև 1921 թ. Շեքսպիրից թարգմանել և տպագրության համար պատրաստել էր տասներկու պիես: Բանասիրության մեջ տարբեր կարծիքներ կան այն մասին, թե Մասեհյանն իր ողջ կյանքի ընթացքում քանի պիես է թարգմանել: Գ. Դաբլին ասում է՝ 20, պրոֆ. Վ. Առաքելյանն այդ թիվը դարձնում է 21, Հ. Գաբազյանը պնդում է 16-ի վրա, Հ. Մարտիրոսյանը միանում է նրան: Արվեստագետ Ռ. Զարյանը կանգ է առնում 14-ի վրա: Թվում է, թե ամենահավանականը 15-ն է: Բացի վերը նշված պիեսներից («Համլետ», «Ինչպես կուզեք», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Մակբեթ», «Արքա Լիր», «Ռոմեո և Ժուլիետ», «Վենետիկի վաճառականը», «Օթելլո»), 1910—1921 թթ. նա թարգմանել է

³⁰ Տե՛ս ԳԱԽ ԴԽԾ, ք. 5, № 97 գ և ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», Երևան, 1966, № 11:

³¹ ՊՊԿԱ, ֆ. 30, ց. 1, գ. 16, թ. 32:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, գ. 13, թ. 60, 61:

³⁴ Տե՛ս «Համլետ», Վիեննա, 1921:

ևս երեք պիես՝ «Իգուր տեղն աղմուկ», «Հուլիոս Կեսար» և «Միջամատալին գիշերվա երազ»։ Այդ դեպքում պետք է «Համլետ»-ի առաջաբանից հետո մինչև 1931 թ. թարգմանած և հղկած լինի «Կորիդուան»-ը, «Տիմոն Աթենացի»-ն և «Չմեռային հեքիաթ»-ը։

Բայց խնդիրը, ինչպես նշում է Ռ. Զարյանը, քանակի մեջ չէ։ Եթե Մասեհյանը թարգմանած լիներ դրանցից միայն երկուսը՝ «Համլետ»-ը և «Օթելլո»-ն, դարձյալ կմնար նույն բարձրության վրա, ինչ բարձրության վրա կանգնած է այժմ³⁵։

Հովհաննես Մասեհյանը մի յուրահատուկ ձգտում է ունեցել իր ժողովրդին հաղորդելու «զրանս հանճարո»։ Նա թարգմանել է նաև Դյոթեից, Բայրոնից, Հայնեից, Օմար-Խայյամից, Տագորից, գուցե նաև այլ նշանավոր գրողներից։ «Լեզու ասած դժվարին բանը նրա համար խաղալիք էր դարձել»,—ասում է նրա ընկերներից մեկը։ Նա գիտեր անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն (հին ու նոր), պարսկերեն (հին ու նոր), թուրքերեն, հունարեն, լատիներեն, ռուսերեն (։), հայերեն (հին ու նոր)։ Թերևս նաև ճապոներեն։ Այս տեսակետից նա մի ֆենոմեն էր։ Նրա համար այս լեզուներից մի քանիսը, ինչպես վկայում են նրա Թեհրանի բարեկամները, եղել են խոսակցական։ Հովհաննես Մասեհյանը ամենից ավելի փայլատակել է շեքսպիրյան թարգմանությունների մեջ։ Շեքսպիրի առաջին թարգմանությունից անցել է շուրջ 70 տարի, սակայն Մասեհյանը մնացել է անհասանելի։

Հ. Մասեհյանը թարգմանությունները կատարել է հստակ ու որոշակի նպատակով։ Անկեղծ հայրենասերը ցանկացել է, որ Շեքսպիրի բարերար ազդեցությունը տարածվի հայ գրականության վրա, հիմք ծառայի հայ հասարակական մտքի, գեղարվեստական գիտելիքների ու ճաշակի առաջադիմության։ «Ես համոզված եմ,—գրել է թարգմանիչը Ավ. Իսահակյանին,—որ Շեքսպիրի գործերի թարգմանությունը խոր ազդեցություն պիտի թողնե մեր գրականության վրա։ Եթե գերմանական գրականության հսկաները ազդված են Շեքսպիրից, որքան ավելի մերոնք պետք ունեն ազդվելու։ Այդ պատճառով է, որ այժմ բոլոր եռանդով նվիրված եմ այդ գործին»³⁶։

Այս տեսակետից շատ հետաքրքրական է Մասեհյանի մտերիմ ընկերներից մեկի՝ Հ. Միրզոյանի վկայությունը. «Ոմանք նրան առաջարկում էին գրել ինքնուրույն բանաստեղծություններ և մի կողմ դնել թարգմանչի համեստ կոչումը։ Առաջարկողները առարկում էին, թե «վերջապես քո պես մարդիկ պիտի դուրս գան ազատելու մեզ աժանագին բանաստեղծությունների այս պատուհասից, որով տեղից վեր կ'ացող գրչակը ողողում է մեր գրականությունը և ստանձնում բանաստեղծի հովեր։ Քո պես մարդը, որ խորապես ծանոթ է աշխարհի ամենամեծ բանաստեղծների գործերի հետ, որոնք գրված են պարսկական, անգլիական, գերմանական, ֆրանսիական լեզուներով, լեզուները որոնց բոլորին դու տիրապետում ես, ունենալով քո գեղարվեստական ըմբռնումը և զարգացումը, անշուշտ մեզ կտա այնպիսի գործեր, որոնք կարող են ծառայել որպես դասագիրք՝ կրթելու համար ապագա իսկական բանաստեղծների ճաշակը։ Սրա համար նա մեկ պատասխան ունի։ Քիսկ հայ գրականությունը ինչ կարող է շահել դրանով, ավելի քան կարող է շահել իմ թարգմանություններով։ Եթե ուրույնների կրթության մասին եք խոսում, Շեքսպիրը կարող է անել այդ շատ ավելի լավ, քան ես, որովհետև ես գիտեմ, որ իմ ինքնուրույնը երբեք չի կարող հասնել նրա գործերին։ Ես ցանկանում եմ, որ հայկական գրականությունը հարստանա իմ աշխատանքով և հայությունը շահե դրանով։ Իսկ այդ նպատակին ավելի շուտ կարող եմ հասնել թարգմանելով օտար ազգի վարպետների գործերը, որոնց ես երբեք մոտենալ չեմ կարող, և ոչ թե գրելով ինքնուրույն համեմատաբար միջակություններ։ Ինքնուրույն կերպով ես կշահեմ հայ բանաստեղծի կոչումը, և իմ պաշտոնակիցներին մեջ կբռնեմ գուցե շատ ավելի պատվավոր տեղ, քան ոմանք կարող են նախատեսել, բայց այդ սնապարծությունը ինձ երբեք չի գրավում»³⁷։

Շեքսպիրյան թարգմանությունները մեծ ճանաչում բերեցին Հովհաննես Մասեհյանին։ Գերմանական Մեյեր հանրագիտարանի Շեքսպիրի թարգմանությունների բաժնում գրված է, որ շեքսպիրյան բոլոր լեզուների թարգմանությունների մեջ իր հաջողությամբ և հարազատությամբ առաջին տեղը գրավում են Շլեգելի գերմաներեն թարգմանությունները, իսկ երկրորդ տեղը՝ Մասեհյանի հայերեն թարգմանությունները³⁸։

Տաղանդավոր թարգմանչի համբավը հասել է Անգլիա։ Լոնդոնի Շեքսպիրյան ակադեմիան նրան ընտրել է պատվավոր անդամ։ Շեքսպիրի մահվան 300-ամյակի հոբելյանական հանձնա-

35 Տե՛ս «Գրական թերթ», 1965, № 47։

36 Ավ. Իսահակյանի ընտանեկան արխիվ։

37 «Ալիք», Թեհրան, 1932, մարտի 31։

38 Տե՛ս «Վերածնունդ», Թեհրան, 1932, № 7/96։

ժողովը 1916 թ. Հովհաննես Մասեճյանին հրավիրել է մասնակցելու շեքսպիրյան համաշխարհային ֆորումին, որտեղ նա ճառ է արտասանել³⁹։

Նիկողայոս Մառը զարմանք է հայտնել, թե ինչ տաղանդ ու հոգևոր կորով պետք է ունենա թարգմանիչը, որ մանուկ հայերենով գոտեմարտի մտնի անգլո-սաքսոն հսկայի հետ և մի տրորված ազգի լեզու հավասար դժի վրա դնի մի քաղաքակրթված ազգի լեզվի կողքին։

Հովհաննես Մասեճյանը, ինչպես ցույց են տալիս փաստերը, եղել է նաև արևելագետ։ Վերևում ասեցինք, որ 1889 թ. շահի պատվերով նա պետք է թարգմաներ արևելագիտական մի ձեռագիր աշխատություն։ Այս իրողությունը հիմք է տալիս ասելու, որ նա այդպիսի թարգմանություններ պետք է էլի կատարած լինի։ Հ. Առաքելյանին ուղղված նամակներից մեկում, օրինակ, Մասեճյանը հայտնում է, որ ինքը պարսկական կառավարության կողմից երեկ մասնակցի 1902 թ. օգոստոսին Համբուրգում բացվելիք արևելագետների միջազգային համաժողովին, սակայն ձեռքի տակ մշակված նյութ չունի գիտական զեկուցում անելու⁴⁰։

Հ. Գարագաշի 1927 թ. թե՛ հրանում լույս տեսած «Պարսկահայ տարեցույց»-ում տպագրված է Մասեճյանի հոդվածը պարսկական օրացույցի վերաբերյալ։ Հոդված գրելու շարժառիթը եղել է մեջլիսի որոշումը՝ հին պարսկական (զրադաշտական) օրացույցը վերահաստատելու մասին։ Հեղինակը ցանկացել է ընթերցողներին տեղեկություն տալ օրացույցի պատմության շուրջը։ Քննության առնելով յուրաքանչյուր ամսում եղած տոների կրոնական կամ քաղաքական բնույթը, Մասեճյանը զուգահեռ է անցկացնում պարսկական և հայկական տոների միջև, ցույց տալիս նրանց հավանական կապը։ Այսպես, հունիսը, ըստ պարսիկների, համարվել է անասնապահությանը հովանավորող Տիր հրեշտակի ամիս։ Այդ ամսի 13-ը Արրիզգան տոնն է. այդ օրը մարդիկ ջրով իրար թրջում էին. դա նման է մեր Վարդավառի տոնին, — եզրակացնում է Մասեճյանը։

Հայն հասարակությանը ծանոթ երևելի թարգմանիչը եղել է նաև աչքի ընկնող հասարակական գործիչ։ Արթունական կյանքը, կառավարական բարձրաստիճան պաշտոնները նրա մեջ մոռացության չեն տվել պարսկահայության գոյավիճակը, մասնավորապես հայության ճակատագիրը։ Մասեճյանը ամբողջ էությունը կապված է եղել իր ժողովրդի, նրա ապագայի հետ։ Ժողովրդի բարեկեցության միակ ուղին նա համարում էր լուսավորությունը, կրթությունը, որին և պետք է հետևեր տնտեսական առաջադիմությունը։ XIX դարի վերջին Պարսկաստանը շարունակում էր մնալ արևելքին հատուկ ֆեոդալական միապետական կարգ ունեցող երկիր։ Քիչ թե շատ զարգացած արդյունաբերության մասին խոսք լինել չէր կարող։ Ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապրում էր տնտեսական և կենցաղային սնտանելի պայմաններում։

Այս պայմաններում պարսկահայության, ինչպես և աշխարհով մեկ ցրված իր ազգակիցների գոյության հնարավորությունը Մասեճյանը տեսնում էր կրթական գործի կարգավորման և ազգային մշակույթի զարգացման մեջ։ Նրա հասարակական գործունեությունը, ինչպես և թարգմանչական ու մանկավարժական լարված աշխատանքը, այդ գաղափարների իրականացման լավագույն ձևերից մեկն էր։

90-ական թթ. պարսկահայության կրթության գործը անմխիթար վիճակում էր գտնվում։ Գոյություն ունեցող հատ ու կենտ դպրոցները չէին կարող բավարար համարվել։ 1900 թ. Հ. Մասեճյանի և Հ. Առաքելյանի նախաձեռնությամբ կազմվում է հատուկ հանձնաժողով, որը միջոցառումներ է մշակում պարսկահայության մեջ կրթական լայն ցանց ստեղծելու համար։ Մասեճյանը գլխավորում է նախաձեռնող հանձնաժողովի աշխատանքները։ Հանձնաժողովը մշակում է պարսկահայ կրթության բարելավման ընդարձակ ծրագիր՝ բաղկացած տասնհինգ կետից⁴¹։ Որոշ փաստեր ենթադրել են տալիս, որ ժողովրդական կրթության ծրագրի նախագիծը գրել է Հ. Մասեճյանը։ Նախագծում տեղ են գտել այն միջոցառումները և գաղափարները, որոնց մասին նա հաճախ է գրել իր բարեկամ Հ. Առաքելյանին։ Այս հանձնաժողովը 1900 թ. նոյեմբերին պարսից շահից արտոնություն է ստանում Խավրիզում հայկական դպրոցներ բաց անելու համար⁴²։ Բայց արտոնությունը դեռ գործի սկիզբն էր։ Անհրաժեշտ էր նյութական միջոցներ գտնել, դպրոցական շինությունների հարցը լուծել։ Ահա թե ինչ են վկայում պարսկահայերի կրթական գործի վերաբերյալ կազմված արձանագրությունները. «...Նախաձեռնող հանձնախումբը... 1901 թ. ապրիլին մի նոր գրությամբ ընտրեց մի մասնաժողով, բաղկացած պ. պ. Ալեքսանդր Մելիք-

39 «Արեգ», Վիեննա, 1922, № 9.

40 Տե՛ս ԳԱԹ ՀԱՖ, № 816.

41 Տե՛ս «Մշակ», 1900, № 58.

42 Տե՛ս «Մշակ», 1901, № 10.

Ազարյանից, Հովհաննես յսան Մասեճյանից, Մահտեսի Սիմեոն Թումանյանից, Բագրատ Նավասարդյանից, Համբարձում Առաքելյանից և Դուրյանյանից, որին և հանձնվեց միջոցներ ձեռք առնել, թե ծրագրի կազմել տալու և թե գործի նյութական մասը ապահովելու»⁴³։

Հետագայում Հովհաննես Մասեճյանը պաշտոնի բերումով մեկնում է Եվրոպա, բայց չի մոռանում երբեք պարսկահայության կրթության գործը։ 1902 թ. հոկտեմբերի 11-ին Բեռլինից Առաքելյանին ուղղած նամակում նա գրում է. «Ձեր հոգիվածները պարսկահայերի կրթության մասին մեծ հետաքրքրությամբ կարդացի։ Շատ ցավում եմ, որ առայժմ ես անմասն եմ մնում այն ջանքերի մեջ, որ արվում են ի նպաստ այդ գործին։ Բայց ուրախ եմ, որ գոնե դուք Թեհրան գտնվելով՝ այդ մարդկանց մի քիչ կշարժեք»⁴⁴։

Ատրպատականի եկեղեցական թեմի առաջնորդ Ս. Եպիսկոպոս Այվատյանի նամակից երեւում է, որ Մասեճյանը անհրաժեշտ բացատրություններով կառավարությանն է ներկայացրել հոգևոր պետի գանգատ-նամակը Ատրպատականի հայերի հարստահարության առթիվ։ Ահա թե ինչ է գրում Այվատյանը. «Ստացել եմ հոկտեմբերի 6 թվակիր երկթերթանի Ձեր պատվական նամակը։ Բայց Ձեր երկտողը չեմ ստացել։ Շատ գոհ եմ, որ Թումանյանների միջոցով Նորին Բարձրության սաղրազամին մատուցվելիք նամակը Դուք անձամբ եք ներկայացրել, հաղորդելով միանգամայն Ն. Բ. մանրամասնությունները այն բոլոր հարստահարությունների, որոնք ի գործ են դրվում մի կարգ կաշառակեր պաշտոնյաների և եկեղեցիչ ու բռնավոր արբաբների կողմից Ատրպատականի խեղճ քրիստոնյաների վրա»⁴⁵։

Մի խումբ հայ մտավորականներ Հ. Առաքելյանի ղեկավարությամբ նախաձեռնում են ըստեղծել մի կազմակերպություն «Հայկական ընդհանուր միություն» անունով⁴⁶։ Առաքելյանը 1904 թ. աշնանը այս մասին հայտնում է Մասեճյանին և խնդրում վերջինիս կարծիքը կազմակերպության ծրագրի ու կանոնադրության նախագծերի վերաբերյալ։ Այս առթիվ Մասեճյանը այն կարծիքն է հայտնում, որ «Հայկական ընդհանուր միությունը» չի կարող իր նպատակները ամբողջությամբ իրագործել, քանի որ հայաստաց կառավարությունները երբեք էլ թույլ չեն տա, որ այդպիսի մի կազմակերպություն լայն գործունեություն ծավալի։ «...Ինչպես կարող է մի հաստատություն, որի գործունեությունը անպատճառ աչքի փուշ է լինելու հայ ազգությունը ջրնջելու միտված կառավարությունների աչքին,— գրում է նա,— հրավիրել կաթողիկոսին և պատրիարքին, իրենց պատգամավորներն ուղարկելու այդ ժողովին, և միթե դա հենց նրանց վատ դրության մեջ ձգել չի նշանակում։ Իմ կարծիքով, միությունը պետք է լինի որպես մի ընկերություն, նվիրված հայ ազգի պահպանման և լարօրության լեօժալ միջոցներով, բայց այդ միությունը ոչ մի կերպով իրան չպետք է ջլատե, ընդունելով մի կես պաշտոնական հանգամանք... քանի որ դա ոչ օգտակար է, և ոչ իրագործելի»⁴⁷։

«Հայկական ընդհանուր միությունը» կազմակերպչորեն ձևավորվեց հետագա տարիներին։ Փոխելով իր անունը, մասամբ և ծրագիրը, այն կոչվեց ռամկավարական կուսակցություն։ Հետագա ուսումնասիրության հարց է, թե Հ. Մասեճյանը ինչպիսի մասնակցություն հանդես բերեց այդ կուսակցության պրակտիկ գործունեությանը։ Քաղաքականության մեջ իդեալիստ, Մասեճյանը շատերի նման մեծ հույսեր կապեց 1908 թ. Կ. Պոլսում կատարված պետական հեղաշրջման հետ։ Այդ առթիվ նա հետևյալն է գրում Հ. Առաքելյանին. «Թուրքիայի վերջին դեպքերն ինձ ուրախությամբ համակել են. մեզ հայերիս համար շերազած բախտ է։ Այժմ մնում է հայերին ցույց տալ, թե նրանք կուլտուրական ազգ են, ոչ թե միայն ազդեցություններ. ինչպես բոլոր եվրոպա մեզ այժմ կարծում է։ Եւրոպայի համար բացվում է խաղաղ աշխատության մի նոր թվական։ Կամ պետք է հառաջդիմել, կամ ոչնչանալ։ Մարդ, մարդ պետք է պատրաստել. և այդ կարելի է միայն լուրջ կրթական ձեռնարկություններով, և այժմ, որ Կովկասում էլ հայերը միջոց ունեն աշխատելու և նրանց կրթական հաստատությունները ավելի բարձր մակարդակի վրա դնելու, կարծես թե մեր մտահոգությունների ամենից փոքրը կրթական գործն է»⁴⁸։

1926 թ. Մասեճյանի նախաձեռնությամբ Թեհրանում հրավիրվում է համայնքի ընդհանուր ժողով, որտեղ որոշում է ընդունվում վերականգնել հայ համայնքի կուլտուր-կրթական ինքնավար մարմինները։ Այդ նպատակով ստեղծվում է համայնքը վարող վարչություն, որի նախագահ է

43 ԳԱԹ ՀԱՅ, № 1927։

44 Նույն տեղում, № 817։

45 Նույն տեղում, № 1747։

46 Նույն տեղում, ՀԱՅ, № 1923ա, 1924։

47 Նույն տեղում, № 823։

48 Նույն տեղում, № 831։

ընտրվում Հովհաննես Մասեհյանը։ Նրա ջանքերի շնորհիվ հայ համայնքի հասարակական և մշակութային կյանքը մի նոր թափ է ստանում։ Մասեհյանի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ մշակվում են հայկական դպրոցների միասնական ծրագրեր⁴⁹։

Մասեհյանը 1927 թ. ընտրվում է Մեջլիսի պատգամավոր։ Նրա առաջարկով մեջլիսը ղուևել է օրինագծեր՝ պետական վալյուտայի և փոքր ազգերի կուլտուր-կենցաղային ինքնավար իրավունքների մասին և այլն⁵⁰։

Հովհաննես Մասեհյանը բարոյական բարձր նկարագիր ունեցող երևելի անձնավորություն էր։ Հ. Միրզոյանն իր հուշերում գրում է, որ մտերիմների շրջանում «...Հովհաննես խանը երեխայի նման պարզ էր, անկեղծ և անքող։ Անդամաճան էր իր սկզբունքներին, իր բարեկամներին, իր նպատակներին և նույնիսկ իր հակումներին»։ Որպես գեղագետ,—շարունակում է Հ. Միրզոյանը,—նա խիստ բազմակողմանի զարգացած անձ էր։ Մի գեղեցկուհի, մի պոեմա, մի նկար, մի արձան, մի երաժշտություն, մի վեհապանծ ճարտարապետություն, գեղեցկության տեսակետից նրա համար հավասար կերպով ուսումնասիրության առարկաներ էին... Նա խոսել գիտեի նույնչափ ազատ և նույնչափ վարպետ ու խորիմաստ կերպով, որ լսողի վրա այն տպավորությունն է թողնում, թե այս մարդը ե՛րբ է ժամանակ գտել իր կյանքում այս բոլորի մասին մտածելու ու ինչպիսի՞ ուղեղ ունի, որ այդ բոլորի մասին այսքան լայն ու կրթիչ ըմբռնում ունի»⁵¹։

Վավերագրերը ցույց են տալիս, թե որքան խորն է ապրել նա հայ ժողովրդի ողբերգական վիճակը։ Այն զարհուրելի ճգնաժամը,—գրել է Մասեհյանը,—որի մեջ հայությունը տառապում է այժմ (1916 թ.—Վ. Վ.), սրբազան պարտք է դնում ամեն մի հայի վրա՝ ոչ մի ջանք չխնայել իր դժբախտ հայրենակիցների դատը պաշտպանելու կամ նրանց վիճակը մասամբ ամոքելու համար և ես վերջինը կլինեի, որ մտածեի խույս տալ իմ պարտականությունից⁵²։

Հովհաննես Մասեհյանի հմայքը մեծ էր ողջ Պարսկաստանում։ Նա հարգված էր մեծից ու փոքրից, հանուրի կողմից ճանաչված էր որպես անսահման գիտուն և վերին աստիճանի ազնիվ մի անձնավորություն։ «Երկրի գիտուն և արժանավոր զավակներից մեկն էր»,—ասված է պարսից կառավարության կողմից նրան տրված գնահատականում⁵³։

1931 թ. հիվանդության պատճառով Մասեհյանը հրաժարական է խնդրում շահից։ Նույն թվականի նոյեմբերին նա Տոկիոյից մեկնում է։ Սակայն խարրինում նրա դրությունը այնքան է ծանրանում, որ ուղեկցողները հարկադրված են լինում տանել հիվանդանոց։ Այստեղ էլ նա, հեռու հայրենի հողից, հարազատներից ու բարեկամներից, 67 տարեկան հասակում կնքում է իր մահկանացուն։ Պարսից շահի թույլտվությամբ և հայ համայնքի աջակցությամբ Մասեհյանի աճյունը Հեռավոր Արևելքից Մոսկվայի վրայով 1932 թ. մարտի վերջին փոխադրվում է Թեհրան և ապրիլի 1-ին հանձնվում հողին։

49 Տե՛ս Հ. Գ ա ր ա գ ա շ, Պարսկահայ տարեցույց, Թեհրան, 1927։

50 Տե՛ս «Վերածնունդ», Թեհրան, 1932, № 7/96։

51 Նույն տեղում։

52 ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 681, թթ. 109, 110։

53 Տե՛ս Գ. Դ ա ր ֆ ի, նշվ. աշխ.։